

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

ճարեկան ֆրք. 10


վեցամսեայ " 5

Արտասահման

ճարեկան ֆրք. 12

վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք ետ չեն
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAIZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երբ կ'ուզե՛ք «Հայելի»-ին մէջ աղոյր երեւնալ,

Պատահի սխալ եւ ազնիւ դէմք մը ունենալ:

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԵՒ

ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ՅՈՒՄԵԼԵԱՆԸ



Նոյեմբեր ամսոյ ԲԱԶՄԱՎԷՊ՝ իր նախադրուածը կը նուիրէ Մամուրեանի յորելեանին, անոր կենդանագիր պատկերովը, եւ ի մէջ այլոց պատմական սակարեւոր տեղեկութիւնները կուտայ:

«Մ. Մամուրեան անդրանիկն է Փարիզու Մուրատեան վարժարանի սաներուն մէջ, որ գրական յորելեան մը կը կատարէ: Պատմութիւնը մեզ յիշել կուտայ հինգ տասնեակ տարի առաջ՝ ալեգարդ յորելեարին կայսառ պատանեկութիւնը: Մուրատեան վարժարանի մէջ՝ Փարիզու պետական եւ գրական պատկառելի անձանց ներկայութեամբ, Հայուն ուժեղ մտքի տէր եւ մեծ ապագայ սպառնացող պատանիներու մրցանակաբաշխութիւնը կը կատարուի, ու այդ դասակարգին մէջ Մամուրեան պատանին կը դրուատի «միշտ բարբարոյ, խոհական, ուշիմ, ճարտար եւ ՅԱՄԵՆԱՅԻ ՅԱՌԱՋԱԴԻՄ»(*). հոն առաջին անգամ Զմիւռնիացի հանձարը՝ ԼԱՄԱՐԴԻՆ Գաղղիոյ մեծ բանաստեղծէն դափնիով կը պը-

սակուէր, ու այդ պսակն ստուերն էր ապագայ այն թանկագին պսակին՝ զոր ներկայիս կը հիւսէ ընդ հանուր հայութիւնն, ու անով կը պսակէ յորելեար գրական մեծ մշակի ալեգարդ գլուխը: Մամուրեան թողուց Փարիզը, բայց հոն չի մոռցաւ այն սկզբունքները, զորս վարժարանը անոր սրտին մէջ մշակել էր. հրաժեշտի ժամուն Մուրատեան վարժարանի դահլճին մէջ Սիպուր մեծ պերճախօսն իրեն եւ իր դասակցաց կըսէ. «Այսօրուան օրս դուք ուրիշ բան չէք՝ բայց եթէ ամբողջ քաղաքականութեան մը պատրաստիչ:» Ու պերճախօսին մարգարէութիւնն ունեցաւ իւր լըրումը. եւ այսօր Մամուրեան՝ գրական քաղաքականութեան եւ իւր դասակցիցք՝ պետական վարչական մեծ ու արդիւնաւոր անձեր են:»

* *

Մ. Մամուրեանի յորելեանի հանդէսը Հոկտ. 17 կիրակի օրը կատարուեր է Իզմիրի մէջ խիստ շքեղ կերպով, նախագահութեամբ Գեոր. Մելքիսեդէկ Սրբազանի: Հնորհաւորական բազմութիւ հեռագիր ու նամակներ ղըրկուած են մեծանուն յորելեարին: Գրական նուէրներուն գումարը հասեր է 300 ոսկիի, բացի արժեքաւոր առարկաներէն որոնք կարելոր թիւ մը կազմեն եղեր:

(*) Բազմավէպ 1850. էջ 6.

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ասկէ բանի մը ամիս առաջ ծանուցած էինք թէ Կ. Պոլսոյ ազգ. հիւանդանոցին մէջ «Պաշտօնարան»ի նոր շէնք մը սկսած էր բարձրանալ. այժմ՝ կը տեղեկանանք թէ շէնքը որ կը պարունակէ հիւրնկալութեան սրահ, գրասենեակ, դեղարան, վարչական գործերու յատուկ խուցեր և այլն, ամբողջացած է. յիմարանոցի յատուկ նորակառոյց շէնքն ալ որուն համար 600 ոսկի ծախսած է Հոգաբարձութիւնը իր սնտուկէն, նոյնպէս աւարտած է. ասոնցմէ զատ, Հիւանդանոցի մեծ դուռին շինութիւնը իր յարակից խցիկներով լմնցած է. կը մնայ հիմա ձեռնարկել Մատուռին շինութեանը, զոր բարեսիրտաբար ըստանձնած է Միքայէլ էֆ. Յակոբեան, որ վերոյիշեալ պաշտօնարանի շինութեան հըսկած է՝ դրամական կարեւոր նուիրատուութեամբ մըն ալ մասնակցելով անոր ծախքին

— Ազգ. Հիւանդանոցի Մանկարանին մէջ այժմ կը պատսպարուին երկու սեռէ 102 որբ մանուկներ, 7 տարեկանէն վար:

— «Անցեալ կիրակի օրը Օրսնեան Պատրիարք Բանկալթի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ քարոզ մը խօսեցաւ զուտ ընկերային — բարոյական նիւթի մը վրայ: «Բժիշկ բժիշկեալ՝ զանձն քո» խօսքին ծագումը բացատրելով, ընդլայնեց անոր իմաստը եւ ժամանակակից բարբերու պատշաճեցնելով՝ պարզեց թէ ինչպէ՛ս ամէն մարդ, թէ՛ անհատական և թէ՛ հանրային կեանքի մէջ, ուրիշին բժիշկ ըլլալ, ուրիշին գործերը բնադատել, ուրիշին դարման ցոյց տալ կ'ուզէ, առանց նախ ինքզինքը ու իր գործերը ուղղելու և իր պէտքերուն ու թերութիւններուն դարմանը խորհելու: (*) Պատրիարքական քարոզը, այս անգամ, կրօնային չէր բնաւ, և աւելի ատենաբանութեան մը հանդամանքը ունէր, ժողովրդեան ամէն դասակարգերու ուղղուած: Յորդորներ կարգաց որ ամէն մէկս ինքզինքնիս ուղղելու, ուղղութեան և ճշմարտութեան ճամբէն ընթանալու ջանագիր ըլլանք, ու մեր ընթացքը հաշտեցնենք մեր խղճին հետ»:

(Արեւելք)

(*) Մեր կարգ մը ամենագէտ (?) պարօններուն տկանքները խօսին: Ծ. Խ. Հ.

— Հոկտ. 6 թուականաւ Մշտ առաջնորդարանին կողմէ պահգուխտ Մշեցիներուն ուղեալ կարեւոր յայտարարութեան մը օրինակը ներկայ համարիս 7րդ երեսին մէջ կը հրատարակենք:

— Էջմիածնէն կը հաղորդեն թէ Գէորգեան ճեմարանի 25ամեայ յոբելեանը տօնուեր է Վարազայ Խաչի օրը: Անհատաւ Հայրապետը հանդիսաւոր թափորով հանգուցեալ Գէորգ Գ.ի դամբարանը առաջնորդուելով, հոն հոգեհանգիստ կատարել է: ճեմարանի աշակերտներէն ութը, հանգուցեալ կաթողիկոսի գերեզմանին վրայ իսկ կ'ուխտեն նուիրուիլ կուսակրօն եկեղեցականութեան: Ս. Հայրապետը օրհներ է այդ ընծայացուները և խորատ տուեր է անոնց: ճեմարանի տեղեկագրէն կը հասկցուի թէ 25 տարուան մէջ այդ հաստատութիւնը ունեցեր է 62 ուսուցիչ և 1026 աշակերտ: Ընթացաւարտներու թիւը կը հասնի 119ի, որոնցմէ 8 բահանայ եղած են, 17ը կուսակրօն և մնացածներն ալ այլ եւայլ պաշտօններու մէջ կը գտնուին:

— Թիֆլիզի մէջ հրատարակուած պաշտօնական վիճակագրութենէ մը կը տեղեկանանք թէ 1898 դպրոցական տարեշրջանի միջոցին կովկասի ուսումնարաններու երկսեռ Հայ աշակերտներուն թիւը եղած է 26,243:

— Բագուի մէջ մեծ հանդէսով կատարուել է իր բարեգործութիւններովը ծանօթ Գրիգոր Ասլանեանի յուղարկաւորութիւնը: Հանգուցեալը Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին կտակած է 3000 ռուբլի, և իր այրին ալ խոստացեր է եկեղեցի մը շինել բաղաբէն դուրս գտնուող «Արմենսկայա կողմեան» կոչուած մասին մէջ ուր չքաւոր հայերը կը բնակին:

ԱԶԴ

«Իրաւունք» լրագիրը որ Տ. Խմբագրին անակնկալ հիւանդութեանը պատճառաւ այսօր չի կրցաւ հրատարակուիլ, յառաջիկայ 2րդ քաղաքացի օրը պիտի հրատարակուի:

ԹՐԱՆՍԿԱԼ

(Անգլիական աղբիւրէ)

Լոնտոն 30 Հոկտ. — Կլենքոյի վրայ յարձակող 9000 Պօէրներէ բաղկացած բանակին մէջ անձամբ կը գտնուէր Թրանսվալի ծերունի նախագահը Տ. Քրիւկէր : Պօէրները կը շարունակեն իրենց յառաջխաղացումը անգլիական ստացուածքին՝ Նամալի մէջ :

— Անգլիական նշանաւոր թերթեր գովեստ կը կարդան իրենց հակառակորդներուն ռազմագիտութեան եւ յամառ քաջասրտութեան :

— Հաստատուեցաւ թէ Կլենքօի պատերազմին ժամանակ Անգլիական 18րդ տրական հեծելազորքերուն գունդը գերի ինկած է Պօէրներուն ձեռքը :

— Պօէրները հոկտ. 18ին գրաւեցին Վլրիպուրկը եւ յայտարարութեամբ մը ծանուցին թէ Պէրզուանալանտ իրենց երկրին հետ միացած է եւ բնիկները այսուհետեւ Պօէրներու հպատակը կը համարուին :

— Պօէրները հոկտ. 25ին գրաւեցին Նաւէլիտունը որ Բրմպլըլիի մէկ գաւառն է :

— Բրմպլըլիէն Տ. Սէսիլ Բօսս հեռագրած է Լոնտոն թէ Պօէրներէն չըջապատուած սաստիկ նեղը մնացած են եւ պէտք է շուտով իրենց օգնական զօրք հասցունել :

— Անգլիոյ ծովային նախարարութեան կողմէ պահեստի նաւատորմիդի մէկ մասին շարժման մէջ դրուելը՝ ոչ թէ Թրանսվալի՝ այլ Պարսկաստանի ծոցին մէջ՝ ծագելիք դժուարութիւններու համար է, հանդէպ Ռուսիոյ :


Պէրլին. — Անգլիոյ արտակարգ սպառազինութիւններն քաղաքական չըջանականութեւ ուշադրութիւնը գրաւած են հոս. կառավարութիւնը լուրջ կերպով սկսած է նայիլ ներկայ կացութեան վրայ : Կայսրը երէկ խորհրդակցեցաւ ծովային նախարարին եւ Պիւլով կոմսին հետ որ իսկոյն ելաւ գնաց Պատէն-Պատէն, Հօնէլօէ իշխանին հետ խորհրդակցելու համար : Մինչեւ հիմա եղած սովորութեան հակառակ, կառավարութիւնը մամուլին իմացուց թէ նախարարները կայսեր հետ խորհրդակցեցան եւ Պիւլով կոմսը Պատէն-Պատէն գնաց :

Բարիդ. — Քրանսական կառավարութիւնն ալ սկսած է լրջօրէն նայիլ ներկայ քաղաքական սպառնալի կացութեան վրայ : Էլիզէ

պալատին մէջ նախարարական արտասովոր նիստեր տեղի կունենան : Կըսուի թէ ծովային նախարարը երկար տեսակցութիւն մը ունեցեր է հանրապետութեան նախագահին հետ :

Լոնտոն. — Մի քանիկ ոլմէ եղած գիտողութեանց վրայ թէ Պօէրները վայրենիներ չեն, Անգլիա հրաման տուաւ իր Թրանսվալի զօրաբանակներուն այսուհետեւ չի գործածել Տըմ-Տըմ գնտակները, որոնց պատճառած վէրքերը անբուժելի են :

ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ



(Դասադարձութիւն մը)

Բագու 1 Հոկտ.

Երկու օր առաջ նահանգական դատարանը վեց տարւեան տաժանակիր աշխատանքի դատապարտեց տեղական հարուստներից մէկին — Ալէքսանդր Աբիեանցին, որին դատարանական դահլիճից ուղղակի բանտը առաջնորդեցին զինաւորուած ոստիկանները :

Յիսուսներէք տարեկան, ընտանիքի եւ զաւակների տէր այդ մարդը, որ ունէր ընդարձակ առեւտրական կապեր Պարսկաստանի եւ Ռուսաստանի հետ, որ ունէր նախթալին հողեր եւ մեծ հարստութիւն, գնաց բռնելու Բիլսկու դատարկ թողած տեղը բանտում աւելի խայտառակ յանցանքի համար, քան այն որի համար ինքզինքն սպաննեց թշուառ մը լիոնատէրը՝ Բիլսկին բանտի շրջափակում :

Աբիեանց մեղադրվում էր ... իր ռուս աղախնուն բնական օրէնքի հակառակ բռնաբարելուն համար :

Դատարանը խիստ կերպով վերաբերուեց դէպի մեղադրեալը, որի արարմունքը որքան ամօթալի՝ այնքան էլ արժանի էր այդպիսի մի արդար վճռի :

Մանրամասնութիւններ պատմել աւելորդ եմ համարում : Ահա ձեզ եւ մի տխուր օրինակ մեր այստեղի հարուստների բարքերից :

Աբէլ Ապրէսեանց

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆԹԵԼ ՀԵՌԱԽՕՍ ՆԱԽԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յայտնի եւ ստուգուած է որ ձայներու փոխադրականութիւնը ուղիղ համեմատութեամբ է այն ձևերին խտութեան հետ՝ որուն մէջ կը փոխադրին։ Նմանապէս ծանօթ է՝ ջրոյ մեծ գիւրութիւնը՝ ձայները՝ հեռու տեղեր փոխադրելու։

Ապացուցուած իրականութիւն մ'է նաեւ որ լուրորդ մը՝ ջրոյ մէջ սուզուած ըլլալով ամենապայծառ կերպով կը լսէ շոգենաւի մը մեքենայից փոփոխական ձայները, որովհետեւ ջուրը յորում ընկղմած է լուրորդը՝ թրթռալու վիճակի մը մէջ է, մեքենայից և պըտուտակի գործելուն պատճառաւ։

Այս սկզբունքներէն, խալաքի հնարագէտ Մարիոյ Ռուսոյ տ'Ազար, հետեցուց որ եթէ ականջը կարենար ընդունիլ այս ձայնական թրթռումները, ամենապաշտօն գործի մը ջրոյ տակ ներգործելով՝ ընդունակ պիտի ըլլար զանոնք հաղորդելու հեռաւոր տեղեր ամենորոշ կերպով. և համոզուեցաւ որ հեռախօսական գործի մը գործնական միջոց պիտի ըլլար երկու հեռաւոր նաւեր իրարու հետ հաղորդակցելու։

Ջուրը թելի տեղը կրնայ բռնել։ Բայց նախ հարկաւոր էր ձայնաժողով գործի մը հնարել, որ ջրոյ մէջ ականջի տեղ ծառայէր՝ ապա ուրիշ գործի մ'ալ գտնել՝ որ հաւաքուած ձայները մեծցընէր և յայտնէր անոնց ծագման աղբիւրը։

Հանձարեղ խալաքին յետ բազում աշխատանաց յաջողեցաւ երկուքն ալ հնարել՝ այսինքն գտաւ ընդծովեայ ձայնաժողով մը և անոր ընկալուչ գործին։ Այս հեռախօսական գործիներէն մին ղետեղուած կը կենայ նաւապետին սենեակը, և ձայնաժողովը՝ որ նաւուն արտաքին կողին վրայ կը գտնուի՝ ջրոյ մէջ ընկղմած, հաղորդուած է թելերով՝ ընկալչին։ Երբ ուրիշ նաւի մը մեքենայից շարժման ձայներու թրթռացումը հասնի ձայնա-

ժողովին, սա իսկոյն այն ձայները մեծցնելով կը հաղորդէ ընկալչին՝ որոյ մերձ կը գտնուի լսող անձը։

Ընդծովեայ ձայնաժողովը տեսակ մը կը տփիկ է՝ հաստատուած նաւուց ջրոյ մէջ ընկղմած կողին վրայ։ Այս բոլորածեւ տուիք շատ մը ծակեր ունի, որոնցմէ ջուրը ամէն կողմանէ ներս կը թափանցէ եւ որով ամէն կողմանէ ձայները հոն կը ժողովին։ Ծակտիներուն մէջտեղերը ելեքտրական թելեր հաստատուած են, որոնք միանալով տուիին վերին երեսին վրայ գտնուած խողովակի մէջէն կ'անցնին և կը հասնին մինչև հեռախօս։ Ասիկա կը պարունակէ իւր մէջ էտիսօնի հեռախօսին սկզբանց վրայ հիմնեալ հեռախօս մը։

Տախտակի մը վրայ հաստատուած է ցուցակ մը՝ երկուքի բաժնուած, որոնք կը համապատասխանեն նաւուն երկու կողերուն. երկու սլաքներ ալ՝ կը ծանուցանեն հեռաւոր նաւուն բռնած ուղղութիւնը։ Ցուցակին վերի կողմը հաստատուած է զանգակ մը եւ ուրիշ մը կը գտնուի ընկալչին վրայ, ասոնք կը ծանուցանեն ամենորոշ կերպով հեռաւոր նաւուն պտուտակին դառնալուն երազութեան աստիճանը։

Օտար նաւու մը 7 հազարամեք հեռաւոր ըլլալու անջրպետէն՝ կը սկսի մեր նաւուն հեռախօսի սլաքը շարժիլ և նշանակել անոր ուղղութիւնը և հեռաւորութիւնը. իսկ զանգակը և ընկալուչը միեւնոյն միջոց կը զարնեն անոր պտուտակին դառնալու եզանակին ներգաշնակութիւնը, առանց խանգարուելու մեր գտնուած նաւուն հանած շառաչէն որովհետեւ անոնք բնաւ չեն ժողովր ընդծովեայ ձայնաժողովէն։

Դիւրին է ըմբռնել թէ ո՞րքան կարեւոր բան մ'է այս գիւտս իրեն գործնականութեամբ և մարդկութեան օգտակարութեան նպատակաւ, որովհետեւ նաւերու հեռախօսութեան ձևերու հետեւին պիտի ունենայ նաւորդաց յոյսը՝ որ իրենց նաւը մշուշի միջոց՝ այլոց բախումէն ազատ պիտի պահէ։ Դարձեալ պատերազմական նաւերը՝ սուզանաւերու որոգայթներէն պիտի պաշտպանուին. ասոր շնոր

հիւ՛ վերջերս կատարելագործուած ընդծովեայ նաւերու երկիւղալի յարձակումներէն ալ ազատ պիտի մնան մարտանաւերը :

Յիրաւի, անթել հետախօսութեան միջոց և կամ ամենաթանձր մահախուզի ատեն կը ծանուցանէ նաւերու, սուզանաւերու եւ նոյն իսկ շտեմնուող ընդծովեայ նաւերու մօտենալը . եւ կը ցուցնէ անոնց ուղղութիւնը և պատերազմական նաւերու մարդիկը արթուն կը կեցընէ հսկելու և խուսափելու թշնամեաց մերձենալէն, կամ պաշտպանել իրենց նաւը թշնամեաց անտեսանելի յարձակումներէն, ի գերեւ հանելով անոնց ձիգը և նորանոր հնարքները :

Վերջերս Ռուսոյ տ'Ազարի հեռախօսով եղած ամենայնաւոր փորձերը կ'ապահովցունեն զմեզ թէ յիրաւի շատ օգտակար գիւտ մ'է այն . և զայս գիտնականք եւ նաւապետք կը հաստատեն, որոնք՝ ելած փորձերուն ներկայ գտնուած են՝ ճէնովայի նեղուցը :

ԲԱԶՄԱՎԷՊ

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Թէ ինչո՞ր փութնԱհէ՛Ս ԱՂԱՆ ԿԱՆՈՒԻ ՏՈՒՆ ԶԵՐԹԱՐ

Ընտանեկան կեանքի մէջ եթէ իրական երջանկութիւն մը փնտռենք, անդորրութենէ զատ ուրիշ բան չենք գտներ, որ դժբաղդաբար բաղմամբիւ ընտանեկան յարկերէ գրեթէ միշտ բացակայ կը գտնուի : Ամէն մարդ համոզուած է թէ անդորրութեան համար հարստութիւն պէտք է, որքա՛ն սխալ է այս համոզումը . մարդս ա՛յն ատեն միայն կրնայ անդորր կեանք վարել, երբ ուրիշի կերածին, հագածին ու ունեցածին չի ցանկար : Ընտանեկան խաղաղ կեանքը վրդովող գլխաւոր պատճառը ուրիշ բան չէ՝ բայց եթէ՝ սատրուանը թէ՛ «ան հագնի, ես ինչո՞

չի հագնիմ . ան զուարճանայ, ես ինչո՞ւ օրս օր չընեմ . ան ունենայ, ես ինչո՞ւ չունենամ » մինչդեռ «ան հիւանդ է, ես ինչո՞ւ չի հիւանդանամ, կամ ան դժբաղդ է, ես ինչո՞ւ դժբաղդ չեմ » ըսող մը չի գտնուիր . ու եթէ գտնուի ալ՝ պարզապէս անմիտ մըն է պիտի ըսեն :

Ահա այս պատճառաւ է որ անդորրութիւնը մարդս իր ձեռքովը կը վերդովէ միշտ . իսկ այն որ գիտէ իր կացութենէն գոհ մնալ, առաջին կարգի հարուստէ մը աւելի անդորր կեանք կրնայ վայելել :

Անցեալ իրիկուն Փառնակէս աղան չուզելով դուրսը նստիլ, քիչ մը կանուխէն տուն կը վերադառնայ, հանդարտ իրիկուն մը վայելելու յոյսով : Տիկին Սրբուհի՛ սովորականէն աւելի սիրալիր կերպով կը դիմաւորէ իր ամուսինը :

— Փառնակէս աղա, սա իրիկուն կանուխ գալդ շատ աղէկ եղաւ . ո՛ւր էր թէ ամեն ատեն առանկ ընէիր, որով ես ալ օրուան աշխատանքներէն յոգնութիւն առնելու համար պատն երեւին չի նստելով՝ հետդ կը տեսնուէի :

— Իրաւունք ունիս, կնիկ, բայց ամեն իրիկուն կանուխ չի վերադառնալս ալ իր արդարացի պատճառները ունի :

— Արդարացի պատճառս ի՞նչ է . մարդ իր տունին մէջ ունենալիք ըռահաթութենէն աւելի հանգիստութիւն կրնայ գտնել դուրսը :

— Հիմա ադ խօսքերը ձգէ ու ինծի խօյի խահուէ մը քչէ նայիմ :

— Ըրախիիդ թախըմը շտկած եմ . չե՞ս ուզեր :

— Առաջ խահուէ մը պիտի խմեմ, այսօր շատ յոգնեցայ :

— Միտքս իքէն հարցունեմ, Փառնակէս աղա, սա ուլամա տալլը, կէսը իբէք կէսը բուրդ խումաշներ կայ նէ արշընը քանիի՞ կուտան կոր :

— Շիտակը կուգես նէ՝ խապար պիլէ չունիմ. բանս գործս ձգելով ատոնց դի՞նը պիտի հարցունեմ:

— Քովի Սոֆիկ հանրմը ադ խումաշէն ֆիստան մը շինել տուեր է, անանկ աղւոր քի՛ մարդ վրան նայելէն չի կշտանար:

— Կուշտ մնալ ուզողը ատանկ բաներու վրայ նայելու չէ:

— Ծնունդին անանկ ալ ֆիստանի մը պէտք ունիմ անանկ ալ. խումաշին աղւորութեանը նայիս նէ՝ բէք աժան, իրեք օսկիով գօթիւմ մը կը շինուի կոր ըսին:

— Սուրբիկ, կամաց կամաց ահէն կը կը շտկենք կոր. Խաշին փորձանքը նոր անցուցինք, հիմա ալ Ծնունդինը չի սկսինք:

— Ճանրմ, ադ ալ խօսք է, ակում օրերը հէլպէթտէ ետեէ ետե կուգան:

— Ոսկիներն ալ ետեէ ետե գալու են որ ադ ըսածներդ ըլլան: Աճապա առուտուր կա՞յ մի, չի կա՞յ մի, խապար չունիս, նոր ֆիստան շինելու կեկես:

— Հապա ի՞նչ ընեմ:

— Ունեցածովդ գոհ ըլլալու ես. նոր ֆիստանդ ի՞նչ ունի, շատ շնորհքով ֆիստան է. հիմակու հիմա անով անցունենք տէ, Աստուծով գործերը բացուին ձեռքերնիս եվել փարա մը անցնի նէ՝ քեզի խատիֆէէն շինել կուտամ:

— Զաւակ մը ունենայիր նէ ի՞նչ պիտի ընէիր. վաստկելէ՞ս ետքը ֆիստանդ կը շինեմ պիտի ըսէիր:

— Ադ ուրիշ խնդիր:

— Ուրիշը ի՞նչ է, սէպէ քի անոր կը շինես կոր:

— Տէր ողորմեա, զաւակ չունիմ տէյի թէքմիլ ունեցածս քեզի համար խարճելու եմ:

— Վայլումը անանկ է:

— Ադ ըսածդ բէք պօշ խօսք է:

— Զիյտեմ. ես Ծնունդին աս ֆիստանով ժամ չեմ երթար:

— Կնիկ, տահա Ծնունդին երկու ամիս կայ, մինչև այն ատեն քի՛մ էօլէ քի՛մ գալա:

— Աղէկ ամա, ան խումաշը կը հատնի. ես անոր բէք զարնուեցայ. հիմակու հիմա 12 արշըն առնենք սնտու-

կիս մէկ կողմը դնեմ տէ, Ծնունդին մօտերը շինել կուտանք:

— Ատիկա հիմա չեմ կրնար ընել:

— Ընողներ, ինտո՞ր կընեն կոր:

— Ճանրմ, աչքդ ամէն ատեն ընողները տեսնալուն, քիչ մըն ալ չընողները թող տեսնայ:

— Գուզում Փառնակէս աղա, կէնէ աշխարհքը գլխուս զընտան մի՛ ըներ, ես այսօր ունեցած ֆըրսանթս վայելուեմ. նայէ՛, աւետարանը պիլէ ասօրուանը կե՛ր վաղուանը մի՛ մտմտար կըսէ:

— Աւետարանը՝ ուրիշին ունեցածին աչք մի՛ տնկեր կըսէ. ան քեզի սորվեցնող տէրպապան աս ալ ըսաւ:

— Ըսել է որ չպիտի շինես:

— Եթէ շինելու խօսք տամ, սուտ ըսած պիտի ըլլամ, որովհետեւ կացութիւնըս չի ներեր: Փառք Աստուծոյ, ուտելիք հաց մը ունինք հիմակու հիմա, հագնելիք ալ ունինք, ասանկ աւելորդ բաներու համար ինչո՞ւ հանգստութիւնս նիս աւրենք:

— Ի՞նչ մեղքս պահեմ, սիրտս կոտրեցաւ. ես իսէ, աս իրիկուն կանուխ տուն գալուդ համար ուրախ ըլլամ կըսէի կոր:

— Հիմա հասկցա՞ր, կանուխ չի դալուս արդարացի պատճառը այս է. պարապ խօսքերով գլուխ կուռեցնես. ուշ ատեն գալու եմ որ հաց ուտել ու պառկելու մէկ ըլլայ:

— Կայնէ երթամ խահուէշ եփեմ տէ, քեզի հետ խօսինք:

— Ծնորհակալ եմ, չեմ ուզեր, ալ ասխորժակս գոցուեցաւ, ըսաւ Փառնակէս աղան, ու մտածելով որ եթէ տունը նստէր, խօսքը աւելի երկարելով հանադիստը պիտի աւրուեր, ուստի անմիջապէս փողոց նետուեցաւ, ըստ իւր սովորութեան մինչև ուշ ատեն երթալ ըզբօսարանին մէջ ժամանակ անցունելու համար:

Ու միթէ իրաւունք չունէր...

ԹԻԹԻ

ԵՐԿՈՒ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Ատեն մը Կեսարիոյ շրջակայ վանքերէն մէկուն մէջ Տ. Բարթամ և Տ. Մովսէս անուանով երկու քահանաներ կը պաշտօնավարէին: Առաւ մը, հարցի շարականը սկսուելով միջոցին՝ Տ. Բարթամ իմանալով որ առջի օրը Տ. Մովսէս վանքին էշերէն մէկը պաղար տորեր ծախեր է, առանց իրեն բաժին հանելու, կը բարկանայ, ու մինչև եկեղեցիին աւարտումին սպասելու համբերութիւնը չունենալով, մանաւանդ գիտնալով որ ներկայ ժողովուրդը հայերէն չի հասկնար, հարցի շարականը կարգաւ ալ հետեւեալը կը երգէ ուսուր պատշաճի եղանակաւ:

— Օրհնեալ ես տէր Աստուած հարցն մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան: Օրհնեալ ես տէր, տէր Մովսէս, վանքին էշը գողցեր ես, տորեր բազար ծախեր ես և ինծի կուտ մը տուած չես:

Առ այս Տ. Մովսէս վերի դասէն նոյն եղանակաւ կը պատասխանէ, շարականին երկրորդ տունը ըսելու պէս.

— Ո՛վ տիրացու վրդվրդիկ, լո՛ւ՛, լո՛ւ՛, կուտին կէսը բռնկէ և կէսն ալ իմս է:

Ասոր վրայ Տ. Բարթամ վայրկեան մը առաջ աւարի մասն և բաժինին տիրանալու տենչով, երեսը խաչանքելով կը ձայնէ.

— Փառք հօր և որդւոյ... և այլն:

Միամիտ հաւատացեալն ալ տէրտէրին հետեւելով երկկողմնութեամբ կերկրպագէ ու կը խաչակնքէ:

ԿԵՍԱՐԱՅԻ

ԱՂԱՒԱՂԵԱԼ ԱՆՈՒՆԲ

(Տեղային պառաւանց բերնին մէջ)

Ասվազին — Աստուածածին: Զընունդ — Ծնունդ: Հըլթըմ — Խթում: Պերես — Պետրոս: Զերոն — Ծերոն: Մերսոբ — Միսրոպ: Մուսէս — Մովսէս: Հաչատուր — Խաչատուր: Թագուշ — Թագուհի: Ակոշ — Յակոբ: Գօշ — Գրիգոր: Հազար — Ղազար: Մանաշ — Մարիամ: Էրիվանդ — Երուանդ: Աանի — Աղանի: Ասաբերդ — Եղիսաբէթ: Տիրեան — Տիրան: Սերջօ — Սարգիս: Էկուլատը — Եկաւ: Գնազլատը — Գնաց: Մեռալատը — Մեռաւ: Բոժ. — Խաթուէներ, բոժ մըն ալ ես չիւնած ըլլամ. Կըլկըթալատը — Հալկիթածեց:

(Շար.)

ՅԱՅՏԱՐԱՐ ՈՒԹԻՒՆ

ՄՇՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Կոյում Մշեցի պանդոխտեան

Մշոյ Դաշտին բոլոր գիւղերէն այն կիները որոնք իրենց այրերուն պանդխտելովը այրիացեր են տարիններէ ի վեր, թէ՛ անձամբ և թէ՛ խնդրագրով Առաջնորդարան կը դիմեն:

Ասոնք կը գանգատին իրաւամբ թէ իրենց այրերը 7, 10, 13, 15, եւ այլն տարիններէ ի վեր պանդխտելով հեռաւոր տեղեր՝ մոռցած են զիրենք: Նամակ չեն գրեր, գրամ չեն ղրկեր, Ս. Պապի ժամանակ իրենց ըրած ուխտը չեն յիշեր, մանկամարդ կիները թողած անպաշտպան իրենց ֆէյժը կը նային:

Առաջնորդարան եկած այս տեսակ խնդիրները ուշի ուշով քննեցինք, որպէս զի չափազանցութիւնները որոշենք բուն իրողութիւններէն: Եւ դժբաղդաբար տեսանք որ գիւղերու քահանաները, Ռէսերը, պատուաւոր մարդիկը կը հաստատեն այսպիսի դժբաղդ և տեսակ մը այրիացած կիներու դառն վիճակը: Մենք ականատես և ականջալուր՝ դժբաղդ մանկամարդ կիներու աղերսանքին, զոր առտուընէ մինչև իրիկուն կը բերեն կը թափեն Առաջնորդարան՝ իրենց փոքրիկ ճժերով միասին, տեսնելով անոնց փորձանաւոր կեանքը, անոնց մերկութիւնն ու անթութիւնը, անոնց կարօտութիւնը ու անպաշտպան վիճակը պաշտօնապէս կոչում կընենք Մուշէն, Դաշտէն պանդխտած բոլոր այրերուն և իրենց կը յիշեցնենք մեր Ս. կրօնի եւ տոհմային աւանդութիւններու պահանջները:

Պանդոխտ Մշեցիներ. յիշեցէք որ անմեղ աղջիկներու մեղքը մնած ե՛ք սիրով, ուխտով եւ հիմա երեսի վրայ կը թողուք զանոնք: Յիշեցէք, որ զաւակներ ունիք, որոնք ձեզ մոռցած են, որովհետեւ ձեր հայրական խնամքն ու գուրդուրանքը չեն վայելած եւ շատերն ալ ձեր երեսը չեն տեսած: Յիշեցէք որ ձեր կիներ ընտանեկան ամէն տեսակ վիշտերու կը դիմադրեն, որպէս զի ձեր ուխտած հաւատարմութիւնն ին պահեն:

Յիշեցէ՛ք, որ ամէն ժամանակ ձեր ցանկալի գալստեան կը սպասեն անոնք:

Ու խոր, ամուսնական հաւատարմութիւնը, կեանքի պայմանները չափ մը ունին, այս ալ յիշեցէ՛ք: Ձեր կիները ճարահատ կը դիմեն մեզ, հէրիք է կըսեն, որ այնչափ սպասեցինք: Կա՛մ մեր ամուսինները կա՛մ մեզի ուրիշ ամուսիններ, այս է իրենց դառն աղերսանքը: Կուզէ՞ք որ ձեր կիները այս վշտերուն մէջ տառապին: Կուզէ՞ք որ ձեր կիները ձեզի անէծք կարդան. փոխանակ ձեզ օրհնելու: Կուզէ՞ք որ, վերջապէս, ձեր կիները ալ բոլորովին իրենց յոյսերը կտրած ձեզ մէջ իրենց գլխուն ճարը նային:

Մենք ի պաշտօնէ կոչուած կընենք ձեզ այս եղանակով, որ անգամ մը ձեր միտքը բերէք ձեր տունն ու տեղը, ձեր կիներն ու զաւակները: Ձմեռը ահա եկաւ, հաց, հալաւ պէտք է: Իրենց պատւոյն պաշտպանութիւնը ամենէն մեծ պէտքն է որ ամառ ձմեռ չունի:

Կը խնդրենք որ այս Յայտարարութիւնը ընդունիք իբր ձեր տուններէն գրուած արտասուալից և կարօտակէզ նամակներ: Այս տողերուն մէջ տեսնէք ձեր կիներուն և զաւակներուն արցունքը, մերկութիւնը անօթութիւնը, անպաշտպան վիճակը, և ձեր սրտերը թո՛ղ մորմոքին, թո՛ղ գթով լեցուին: Ձեր տեղը մենք ենք որ կը մորմոքինք մինչև իրիկուն:

Արդ, մինչև 1-2 ամիս պիտի սպասենք որ ձեր ամուսնական հաւատարմութիւնը ցուցնէք կա՛մ վերադառնալով ձեր տեղերը, կա՛մ կանոնաւորապէս նամակ ու դրամ զրկելով ձեր տուններուն, Պատրիարքարանի և առաջնորդարանիս միջոցով:

Հակառակ պարագային, բոլոր պատասխանատուութիւնը ձեր վրայ պիտի ծանրանայ: Ձեր կիներն ու զաւակներ իրենց պարտքը կատարած պիտի ըլլան:

Մնամ աղօթարար

Ընդհ. Վանահ-Առաջն. Տեղապահ

Տարօնոյ

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Մոշ, 6 Հոկտ. 1899

Մահճուպիյէրին միւսեմարը

Գօմէտի պիր բէրտէ

Բօսթա իւճրէթի պիպէ այիտ օլարագ

Փիյ 20 սանթիմ:

Թէ ազգային թատերասաղեր և թէ հերոսական լեզուներէ հայերէնի թարգմանուած տպեալ կամ անտիպ թատրերգութիւններու կատակերգութիւններու պէտք ունեցողները դիմելու են խմբագրութեանս:

Մ. 2.

ԹՈԹՈՎՄՈՒՆՔ

Գողարիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը փաճառի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վարնա:

ՀՈՅՍ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պօնճուգեանի պատկերազարդ Քերական — Ընթերցարանը: Գին 60 սանդիմ. վարժարանաց համար 100ին 15 զեղջ:

Դիմել սա հասցէսով

J. G. BONDJOUKIAN VARNA

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

Մեղի և Ապաշաւ

Պոլսական կեանքէ բաղուած թատերասաղ 5 արար և 1 պատկեր. Գին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:

Отговорникъ М. СКОЛОВЪ
Печантица Взаимность — "Варна"